ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

10 սեպտեմբերի 2016 թվականի N 18-Ն

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 17 հոդվածի 1-ին մասով նախարարությանը վերապահված իրավասությունների սահմաններում, ապահովելով Օրենսգրքի 30-րդ հոդվածի պահանջները, հաշվի առնելով <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետը, <<Ինտեգրալ Պետրոլեում>> ՍՊԸ-ի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման վերաբերյալ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարին ուղղված աշխատակազմի ընդերքի պետական տեսչության միջնորդագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <<Ինտեգրալ Պետրոլեում>> ՍՊԸ-ի նկատմամբ նախարարության նախաձեռնությամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթ իրականացնող Մշտական հանձնաժողովի նախագահին՝

1) հանձնաժողովի անդամներին և վարույթի մասնակիցներին տեղեկացնել նախարարության նախաձեռնությամբ <<Ինտեգրալ Պետրոլեում>> ընկերության նկատմամբ վարչական վարույթի հարուցման, անցկացման տեղի, օրվա և ժամի մասին,

2) վարչական վարույթն իրականացնել ղեկավարվելով <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի պահանջների ապահովմամբ,

3) անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի նիստին այլ անձի կարգավիճակով հրավիրել գործի փաստական հանգամանքների պարզաբանման նպատակով համապատասխան մասնագետի,

4) արդյունքների մասին տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարին:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ